

երթան հրաւիրեն զայն (Մամ. 24): Հրէից քով նոյնպէս «ծառայք» էին հրաւէր տանողները (Առկ. Թ, 3. Մտթ. ԻԲ, 3):

6. — Խափանուումն կոչնոց: — Պարագայ մ'է որ կրնար երբեմն պատահիլ: Երբ խնճոյքը կը տրուէր ի պատիւ բարձրաստիճան անձի մը, եւ սա կ'արգիլուէր գալու, թէեւ ուրիշ հրաւիրեալք ալ լինէին, կը խափանուէր ճաշը: Ասով կ'երեւի թէ մեծարուած կը լինէր աւագ կոչնականին անձը, որպէս թէ առանց իրեն ուրախութիւն չկար: Գայլ վահանայ յիշեալ կոչնոց չկրցաւ գալ Միհրան՝ «խօթութեան» պատճառաւ: Վահան, որ այդ առթիւ պիտի դաւէր Պարսից, ծպտեալ ու «դաւապակ եղեալ, եւ զիշխանսն (Պարսից) որ գային՝ դարձոցանէր ասելով. Հայոց մարդպանն չկարաց գալ ի ճաշն»: Այս էր ուրեմն խափանման պարզ ձեւը: Իսկ անոնք կը մեկնին անվրդով, եւ ի զուր եկած չլինելու համար, հոն մօտերը «ժողովեալ ի տաճար մի՛ ընդ գինի մտին», կ'ըսէ պատմիչը (Մամ. 24):

7. — Տաճարի մեջ: — Հրաւիրեալք դեռ չհասած՝ կանխենք ակնարկ մը ձգել ճաշարանի հանդերձանաց վրայ՝ որոնք կը զանազանին սովորականէն. զի հոս կը պահանջուէր «մեծ պատրաստութիւն առ-